ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի, ժամը 16:30-ի նիստի N 9 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի երկրորդ կուրսում դասավանդվող **«Տվյալների վերլուծությունը ծրագրային ապահովման միջոցով»** առարկայի գիտելիքի ստուգումը բանավոր եղանակից թեստային-համակարգչային դարձնելու մասին հարցը:

Զեկուցող՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյան:

Նշվեց. «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առկա ուսուցման բակալավրիատի 2023 թվականին հաստատված ուսումնական պլանում ներառվել է նոր դասընթաց՝ «Տվյալների վերլուծությունը ծրագրային ապահովման միջոցով», որն ունի գործնական բնույթ: Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնը նպատակահարմար է գտել վերոնշյալ առարկայի գիտելիքի ստուգումն իրականացնել թեստային-համակարգչային եղանակով, ինչը հնարավորություն կտա առավել ճշգրիտ գնահատել ուսանողների գիտելիքներն ու հմտությունները և ապահովել գնահատման անաչառությունը: Հարցը քննարկվել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի, ժամը 11:50-ի նիստում (արձանագրություն N 2): Ելնելով վերը նշվածից՝ առաջարկվեց «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի երկրորդ կուրսում դասավանդվող «Տվյալների վերլուծությունը ծրագրային ապահովման միջոցով» առարկայի գիտելիքի ստուգումը 2024-2025 ուսումնական տարվանից բանավոր եղանակից դարձնել թեստային-համակարգչային (ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի, ժամը 11:50-ի նիստի N 2 արձանագրությունից քաղվածքը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Ա.Գրիգորյանը, Մ.Ասլանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 3 - 7 որոշմամբ հաստատված «Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգի» 90-րդ և 91-րդ կետերը և ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի որոշումը՝ առաջարկել ռեկտորին՝ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի երկրորդ կուրսում դասավանդվող **«Տվյալների վերլուծությունը ծրագրային ապահովման միջոցով»** առարկայի գիտելիքի ստուգումը 2024-2025 ուսումնական տարվանից բանավոր եղանակից դարձնել թեստային-համակարգչային և հանձնարարել տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչին՝ մինչև դեկտեմբեր կազմել առնվազն 500 թեստ գիտելիքի ստուգումը կազմակերպելու համար:

Ռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Գիտական քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2024 թ. հոկտեմբերի 14
Երևան